ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀԾՁԲ-10/2-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 22-ը **փետրվարի 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունն, ի դեմս պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 07/02/2017թ. կնքված № ՇՀԾՁԲ-10/2-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, սահմանեցին ծառայությունների մատուցման (Հավելված № 1) և վճարման (Հավելված № 2) ժամանակացույցեր:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Ծառայություններիի առավելագույն գինը ներկայացված է ծառայությունների վճարման ժամանակացույցում՝ Հավելված № 2, և կազմում է 2.400.000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

2.2 Պատվիրատուն մատուցած ծառայության դիմաց վճարում է Պայմանագրի 4.2 կետի հիման վրա՝ համաձայն Հավելված № 2-ի, բայց ոչ ուշ քան 25/12/2017թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Վճարման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էյչ գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Բաշինջաղյան 1-13/30
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Շահումյան» մ/ճ
Հ/հ 900011117034	Հ/հ 163028030332
ՀՎՀՀ 02703824	ՀՎՀՀ 01254973
ՀՀ պաշտպանության նախարարության	Տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետի, ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված № 1
№ ԵՀԾՁԲ-10/2-5 պայմանագրին
կից № 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2017թ.

Չափաբաժին № 2

Գնման առարկան		Ծառայության տեխնիկական բնութագիրը	Չ/մ	Միավորի արժեքը, դրամ
Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ (օդորակիչների նորոգման և սպասարկման ծառայություններ)	1	Սպլիտի մաքրում հատուկ հեղուկով	հատ	2500
	2	Սառնագենտի լիցքավորում R22	կգ	3500
	3	Սառնագենտի լիցքավորում R420	կգ	10200
	4	Էլ. կոնդենսատորի փոխում	հատ	1980
	5	Ռելեի փոխում	հատ	3000
	6	Էլ կառավարման բլոկի փոխում	հատ	41000
	7	Ռևերս փականի փոխում	հատ	10900
	8	Փականների նորոգում	հատ	1980
	9	Սառնագենտի կորուստի հայտնաբերում և նորոգում	տեղ	4900
		Կոմպրեսորի փոխարինում		
	10	V=120խմ/ժ	հատ	240000
		V=80խմ/ժ	հատ	120000
		V=60խմ/ժ	հատ	84900
		V=40խմ/ժ	հատ	64920
		V=20խմ/ժ	հատ	54900
		Թմբուկավոր օդափոխիչի փոխարինում	հատ	21900
	11	Օդափոխիչի փոխում	հատ	45900
	12	Համակարգի խոնավազրկում	հատ	13800
	13	Վնասված պղնձե խողովակների փոխարինում	գմ	3900
	14	Կոնդենսատի հեռացման համակարգի կարգաբերում	հատ	3000
	15	Պղնձե խողովակների ջերմամեկուսացում	գմ	1800
	16	Օդորակիչի տեղադրում ավտոմաթարձիչով	հատ	45000

Ծանոթություն. *Ծառայությունը կմատուցվի համաձայն ԿՇ և ՁԲ վարչության կողմից տրվող հայտի՝ I-IV եռամսյակներում, ոչ ուշ քան 20/12/2017թ. փաստացի կատարված ծառայությունների հիման վրա, կազմված թերությունների ակտերով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի Պ/Կ -Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Էյչ գրուպ» ՍՊԸ
Տնօրեն
ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված № 2
№ ՇՀԾՁԲ-10/2-5 պայմանագրին
կից № 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2017Թ*.

Հ/հ	CPV կոդ	Ծառայության անվանումը	Չ/մ	Ըստ ամիսների											Առավելագույն Գումար /ՀՀ դրամ/
				II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
2	50531220/4/4/1	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ (օդորակիչների նորոգման և սպասարկման ծառայություններ)	դրամ	200,000	200,000	1,100,000	1,100,000	1,100,000	2,100,000	2,100,000	2,100,000	2,400,000	2,400,000	2,400,000	2,400,000

Ծանոթություն.

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Էյչ գրուպ» ՍՊԸ

Տնօրեն

...ՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՇՀԾՁԲ-10/2-5

ք. Երևան 7-ը փետրվարի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունն, ի դեմս պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված № 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված № 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին

հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը, ներառյալ ԱԱՀ-ն, ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 *Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունը կմատուցվի հաջորդող տարիներին ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում, Կատարողը պարտավոր է Համաձայնագիր կնքել՝ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Կատարողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում: Ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի կլուծվի: Այն դեպքում, երբ Ծառայությունները մատուցելու համար տվյալ տարվան հաջորդող տարում չեն նախատեսվի համապատասխան ֆինանսական միջոցներ՝ սույն պայմանագիրը կլուծվի:*

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի № 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում գումարը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կիրառվելու ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:*

փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի №№ 1, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ԿԾԶԲ վարչությունը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էյչ գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Բաշինջաղյան 1-13/30
ՀՀ ՖՆ Ա գործակալության վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Շահումյան» մ/ճ
Հ/հ 90001111/034	Հ/հ 163028030332
ՀՎՀՀ 02705824	ՀՎՀՀ 01254973
ՀՀ պաշտպանության նախարարության	Տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված № 1
№ ՇՀԾՁԲ-10/2-5 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժին № 2

Գնման առարկան	Ծառայության մատուցման վայրը		Ծառայության տեխնիկական բնութագիրը	Չ/մ	Միավորի արժեքը, դրամ
Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ (օդորակիչների նորոգման և սպասարկման ծառայություններ)	ՀՀ ՊՆ վարչական համալիրում և ՀՀ տարածքում տեղակայված զորմասերում	1	Սպլիտի մաքրում հատուկ հեղուկով	հատ	2500
		2	Սառնագենտի լիցքավորում R22	կգ	3500
		3	Սառնագենտի լիցքավորում R420	կգ	10200
		4	Էլ. կոնդենսատորի փոխում	հատ	1980
		5	Ռելեի փոխում	հատ	3000
		6	Էլ կառավարման բլոկի փոխում	հատ	41000
		7	Ռևերս փականի փոխում	հատ	10900
		8	Փականների նորոգում	հատ	1980
		9	Սառնագենտի կորուստի հայտնաբերում և նորոգում	տեղ	4900
		10	Կոմպրեսսորի փոխարինում		
		11	V=120խմ/ժ	հատ	240000
			V=80խմ/ժ	հատ	120000
			V=60խմ/ժ	հատ	84900
			V=40խմ/ժ	հատ	64920
			V=20խմ/ժ	հատ	54900
			Թմբուկավոր օդափոխիչի փոխարինում	հատ	21900
		12	Օդափոխիչի փոխում	հատ	45900
		13	Համակարգի խոնավազրկում	հատ	13800
		14	Վնասված պղնձե խողովակների փոխարինում	գմ	3900
		15	Կոնդենսատի հեռացման համակարգի կարգաբերում	հատ	3000
		16	Պղնձե խողովակների ջերմամեկուսացում	գմ	1800
		17	Օդորակիչի տեղադրում ավտոամբարձիչով	հատ	45000

Ծանոթություն. Ծառայությունը կմատուցվի համաձայն ԿԾ և ՁԲ վարչության կողմից տրվող հայտի՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում փաստացի կատարված ծառայությունների հիման վրա, կազմված թերությունների ակտերով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնօրեն

ԿԱՏԱՐՈՂ
«Էյչ գրուպ» ՍՊԸ
Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված № 2
№ ՇՀՄՁԲ-10/2-5 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Բ համար	Ծառայության անվանումը	Հ/մ	Անհրաժեշտ Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում	Ընդամենը
2	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ (օդորակիչների նորոգման և սպասարկման ծառայություններ)	դրամ	100%	100%

Ծանոթություն.
* Վճարումը կիրականացվի անհրաժեշտ Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում հանձնման-ընդունման արձանագրություններիհիման վրա՝ առավելագույն գումարի շրջանակներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի Պ.Ժ.Կ.

Տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Էյչ գրուպ» ՍՊԸ

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված № 3
№ ՇՀԾՁԲ-10/2-5 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ *և*

*Պայմանագրի կողմը՝ ի դեմս*_____*, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի № եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 3.1
№ ԾՀԾՁԲ-10/2-5 պայմանագրի

ԱԿՏ №

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------(Պատվիրատուի անունը)----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ----------(Կատարողի անունը)----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված № ---------- գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. --------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն